ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2019-11-2-Ա

ք. Երևան 14.11.2019թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2019 թվականի նոյեմբերի 14-ի նիստում քննարկեց 2019 թվականի հոկտեմբերի 18-ին արտոնագրային հավատարմատար Ալբինա Նազարյանի կողմից ներկայացված՝ «Սանֆուդ» ՍՊԸ (Կոտայքի մարզ, գ. Զովունի, AM) բողոքը (No20180546) «SUNFOOD МАРГАРИН» ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 111-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման, քանի որ այն շփոթելու աստիճան նման է հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս «Տորգովի դոմ» Սշչեդրո» ուկրաինական ընկերության կողմից օգտագործվող «МАРГАРИН Молочный ОСОБЫЙ» ապրանքային նշանի նկատմամբ, որը գովազդվում https://torgovyjdom-schedro.uaprom.net/p163686524-margarin-molochnyj-osobyj.html ինտերնետային կայքում, և որի մասին հայտատուն կարող էր իմանալ:

Կոլեգիայի անդամը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի դրույթները բողոքարկման խորհրդի

քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ հայտարկված ապրանքային նշանը շփոթելու աստիճան նման է հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս «Տորգովի դոմ» Սշչեդրո» ուկրաինական ընկերության կողմից օգտագործվող «МАРГАРИН Молочный ОСОБЫЙ» ապրանքային նշանին, որը գովազդվում https://torgovyjdom-schedro.uaprom.net/p163686524-margarin-molochnyj-osobyj.html ինտերնետային կայքում, և որի մասին հայտատուն կարող էր իմանալ:

Բողոքարկողը համաձայն չէր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ և պնդում էր բողոքում նշված իր հիմնավորումները:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ կայացված որոշումը իրավաչափ է և հայտարկված ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Ալբինա Նազարյանի կողմից ներկայացված՝ «SUNFOOD МАРГАРИН» (No20180546) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՆԱԻՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ